

## ԳԵՐՆԵՑԻՆ ԸՆՈՒՅՆԵՐ.

Երազ տեսալու, չքնազ հովիտ՝

Անրջական և փարթամ.

Խունկ ու միխակ, բոյր ու ժպիտ,

Զուր ու վտակ մեղրահամ:

Եւ ես մենակ ու ծանրաքայլ՝

Այն հովտի մէջ լուսավառ՝

Երջում էր, սիրաս մոայլ,

Հողիս տխուր, տենչավառ:

Եւ գունագեղ ու պերճ ծաղկունք,

Սրշալոյսի հով զեփիւռ

Չբուժեցին վերքս խորունկ,

Սրտիս ցաւերն ու մրմուռ...

Հովիտն անցայ, և իմ տուած,

Բնդարձակ վայր բացուցիւռ

Արեակէզ և անկանաչ,

Դաշտեր խանձուած ու ծարաւ:

Եւ ես տեսայ բահը ձեռքին

Եղբարյս այնտեղ, այն դաշտում

Երդ էր կանչում՝ երդ սրտազին,

Քրտինք մտած աշխատում:

Երգում էր նա սուրբ աշխատանի,

Ազնիւ վաստակ, իւր նկուղ...

Եւ երդի հետ խինոդ ու հրճուանք

Զեղուում էին յորդարուղիս:

Եւ համակուած այդ հրճուանքով՝

Ես վազեցի անհամբեր,

Փաթաթուեցի նրա վզով

Ու մոռացայ իմ ցաւեր...

**Օսրուրին Պիերոսիան.**

